ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արարատի մարզի Դվին գյուղական համայնքի ղեկավարի 2011 թվականի առաջին կիսամյակում կատարած աշխատանքների

29.07.2011 թվականին Դվին գղուղական համայնքում տեղի ունեցավ հանրային լսում, որին մասնակցում էին համայնքի ավագանու անդամներ, համայնքի անդամներ, գյուղապետարանի աշխատակիցներ և մարզպետարանի ՏԻ վարչության առաջատար մասնագետ Հ. Դանիելյանը:

Լսեցին համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2011 թվականի առաջին կիսամյակում կատարվ աշխատանքների մասին:

Արձանագրվեց,որ 2011 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Դվին համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները՝

Գյուղապետարանը բնակիչներին տվել է ավելի քան 300 ամենատարբեր բնույթի տեղեկանքներ: Ստացվել են 35 նամակներ, պաշտոնական գրություններ մարզպետարանից և այ կազմակերպություններից,124 դիմումներ համայնքի բնակիչներից: Դրանք բոլորն էլ քննարկվել ե և տրվել պատասխաններ:

Ըստ գրաֆիկի, համանքի ողջ տարածքում պարբերաբար իրականացվել են աղբահանության աշխատանքներ:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է 22 հողամասերի չափագրում և տրվել նոր իրադրության հատակագծեր:

2011 թվականի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝

ա/ հողի հարկ - 4012000 դրամ
բ/ գույքահարկ - 20550000 դրամ
գ/ վարձավճարներ - 600000 դրամ

Հաշվետու ժամանակահատվածում համայնքի բնակչությանը տրվել է 450000 դրամ թաղման նպաստ:

Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 1475000 դրամ ֆինանսական աջակցություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ